

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Պատմամշակութային արգելոց-թանգարնների  
և պատմական միջավայրի պահպանության  
ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն  
Ա. Հովհաննիսյան

Հայեցակարգ

«Պատմամշակութային արգելոց -թանգարանների և պատմական  
միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի թանգարանային  
հավաքածուի համալրման

Ըստհանուր դրույթներ

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմության և  
կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր  
վարչության 1988 թ. նոյեմբերի 1-ի թիվ 582 և 1989 թ. հունիսի 2-ի թիվ 322  
հրամաններով ստեղծվեց «Արգելոց-թանգարանների միացյալ դիրեկցիա»-ն, որի  
հիմնական գործառույթներն էին համակարգի պատմամշակութային  
հուշարձանների, արգելոցների, արգելոց-թանգարանների, թանգարանային  
արժեքների և դրանց առնչվող պետական փաստաթղթերի հաշվառման,  
պահպանման կազմակերպումն ու համակարգումը: 1988 թ. վերջին «Արգելոց-  
թանգարանների միացյալ դիրեկցիա»-ի ֆոնդերում պահվում էին 47314 միավոր  
թանգարանային արժեքներ և փաստաթղթեր: Հիմնարկը վերակազմակորվեց և  
ստացավ «Պատմական միջավայրի պահպանության հանրապետական  
ծառայություն» անվանումը:

ՀՀ կառավարության 2003 թ. մարտի 7-ի թիվ 312-Ն որոշմամբ՝ վերոհիշյալ  
կազմակերպության հիման վրա, որպես իրավահաջորդ, ստեղծվեց ՀՀ մշակույթի  
նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական  
միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը («Պահպանության  
ծառայություն» ՊՈԱԿ): Կանոնադրությամբ ամրագրելով իր գլխամասային  
կառույցում և մասնաճյուղերում, ի թիվս այլ գործառույթների, նաև թանգարանային  
հավաքածուների համալրման, հաշվառման և պահպանության աշխատանքների  
շարունակական գործառույթը:

## Թանգարանային հավաքածուի կազմը

2003 թ. ԴՈԱԿ-ի ֆոնդերում (ներառյան մասնաճյուղերը) հաշվառված էր 263235 միավոր թանգարանային առարկա: 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Պահպանության ծառայություն» ԴՈԱԿ-ի համակարգի հավաքածուն ընդգրկում էր 349303 միավոր առարկա, որից 323702 հիմնական, 25601 գիտաօժանդակ ֆոնդի նյութեր են: «Պահպանության ծառայություն» ԴՈԱԿ-ի հիմնական հավաքածուն ընդգրկում է՝ փաստավավերագրական նյութեր (գծանկարներ, չափագրություններ, հանույթներ, քարտեզներ, նախագիծ-նախահաշիվներ, սևանկարներ, լուսանկարներ և այլն), տարբեր հուշարձանների պեղումներից հայտնաբերված հնագիտական իրեր (կավանոքներ, աշխատանքային գործիքներ, զենքեր, սպասք, հմայիլներ, պերճանքի առարկաներ և այլն), որմնանկարներ, Հայաստանի տարբեր պատմապատճենագրական շրջանների կենցաղն ու մշակույթը բնութագրող ազգագրական նյութեր (գորգեր, կարպետներ, անկողնապարկեր, գոտիներ, ասեղնագործություններ, աշխատանքային գործիքներ, սպասք, կենցաղային այլ առարկաներ և այլն), կերպարվեստի (գեղանկարներ) և դեկորատիվ-կիրառական արվեստի (ժամանակակից խեցեգործություն և մետաղագործություն) նմուշներ:

Բազմաքանակ և բազմանույթ են նաև «Պահպանության ծառայություն» ԴՈԱԿ-ի մասնաճյուղերի ֆոնդերը, որոնց գործունեությունը իրականացվում են համաձայն ֆոնդերի հաշվառման ինքնուրույն կամ խառը համակարգերի:

«Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարան մասնաճյուղի ֆոնդերում պահպանվում է 11022 թանգարանային առարկա, որից՝ 5822 հիմնական, 5200-ը գիտաօժանդակ բնույթի նյութեր են: Մշտական ցուցադրության մեջ ներառված է 1589 ցուցանմուշ: Հիմնական ֆոնդի զգալի մասը «Զվարթնոց» համալիրի պեղումներից հայտնաբերված նյութեր են՝ ճարտարապետական բեկորներ, կավից և մետաղից պատրաստված կենցաղային իրեր, ապակուց, թանկարժեր և ոչ թանկարժեր մետաղներից պատրաստված պերճանքի առարկաներ, խճանկարի մնացորդներ: Ընդգրկված են նաև Զվարթնոցի վերականգնման նախագծեր և այլ փաստավավերագրական նյութեր:

«Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան մասնաճյուղի ֆոնդերում պահպանվում է 28741 առարկա, որից 28757 հիմնական, 16 գիտաօժանդակ բնույթի նյութեր են: Մշտական ցուցադրության մեջ ընդգրկված են

8587-ը: Հիմնական ֆոնդը բացառապես կազմված է Մեծամոր հնավայրի պարբերական պեղումներից հայտնաբերված հնագիտական առարկաներից (քարե կուռքեր, արձաններ, խեցեղեն, գենքեր, աշխատանքային գործիքներ, հմայիններ, թանկարժեք մետաղներ և քարեր պարունակող պերճանքի առարկաներ և այլն): Նշված նյութերը ընդգրկում են ուշ էնեոլիթից մինչև ուշ միջնադար ընկած ժամանակահատվածը (մ.թ.ա. XXXVI – մ.թ. XVIII դդ):

Բերդ պատմամշակութային արգելոց-մասնաճյուղի ցուցարանում պահպում է տարածաշրջանի բնակչության մենցադին և մշակույթին վերաբերող հնագիտական և ազգագրական բնույթի 1060 առարկա, որից 948 հիմնական, 112 գիտաօժանդակ ֆոնդի նյութեր են: Մշտական ցուցադրության մեջ ընդգրկված է 399 ցուցանմուշ:

### Համալրման խնդիրները, նպատակները.

Համալրման գործառույթի իրականցումը պետք է լինի նպատակային և համապատասխանի «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և նրա մասնաճյուղ արգելոց-թանգարանների կանոնադրություններով հաստատված գործառույթներին:

Կազմակերպության կողմից պարբերաբար կատարվող համալրումները պետք է ծառայեն պատմական, հնագիտական, ճարտարապետական անշարժ հուշարձանախմբերի, հուշարձանների համալիրների, պատմական, կենցաղակարման և բնապատմական միջավայրի, պատմամշակութային կարգավիճակ ունեցող հողերի, տեղանքապատկերների (լանդշաֆտ) և մշակութային այլ արժեքների, արգելոց-թանգարան մասնաճյուղների տարածքներում գտնվող հուշարձանների պահպանության, ուսումնասիրման, նպատակային օգտագործման, հանրահոչակման գործառույթների իրականացմանը, ինչպես նաև պետք է նպաստեն նշված բնագավառներում կատարվող աշխատանքներին:

Կատարվող համալրումները պետք է նպաստեն թեմատիկ գիտական մշտական ցուցադրությունների կազմակերպմանը և համալրմանը, հուշարձաններին առնչվող առանձին հարցադրումների նորովի մեկնաբանմանը, մշակութային, կրթական-լուսավորչական, գանգվածային ծրագրերի իրականացմանը, մշակութային զբուաշրջության զարգացմանը, մշակութային

ժառանգության հանրահոչակմանը՝ ժամանակավոր և շրջիկ ցուցադրությունների կազմակերպմանը, տարարնույթ իրատարակությունների իրականացմանը: Համալրման աշխատանքներն իրականացնելիս պետք է բացառել պատահական, ոչ նպատակային ձեռքբերումները:

### **Համալրման ձեերը, սկզբունքները, տեսակները, չափորոշիչները**

Թանգարանային հավաքածուի համալրման կարևոր նախապայմանը՝ հավաքածուի ամբողջականության պահպանումն է, նյութական և ոչ նյութական մշակութային տարրի տեղեկատվության ամբողջականությունն ապահովելու նպատակով:

Համալրումն իրականացվում է ընթացիկ գնման, նվիրատվության, փոխանակման, նպատակային պատվերի միջոցով:

Հավաքածուների դասակարգման, հաշվառման և պահպանման սկզբունքներով ու մոտեցումներով պայմանավորված համալրման աշխատանքներն իրականացվում են համալրման սիստեմատիկ, թեմատիկ և համալիր (կոմպլեքսային) տեսակների համաձայն:

Համալրման աշխատանքներն իրականացվում են հաշվի առնելով թանգարանային առարկային բնորոշ բնդիանուր և մասնակի չափորոշիչները: Հավաքչական աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է փաստել արձանագրել հավաքածուի մասին ամբողջական տեղեկատվությունը, ինչն անհամեմատ արժենորում է թանգարանային առարկայի, հավաքածուի գիտական արժեքը, հետարարություն տալիս հավաքածուին վերաբերող գիտատեղեկատվական շտեմարանը ներկայացնել առավել համակողմանի և ամբողջական:

### **Համալրման աղբյուրները**

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հավաքածուի համալրման աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

### **Համալրման աղբյուրներն են.**

ա/ ՀՀ տարածքում կատարվող պեղումների արդյունքները, մասնավորապես.

- «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախմբի կողմից «Մեծամոր» հնավայրում իրականացվող սխտեմատիկ պեղումների,
- «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախմբի կողմից «Զորաց քարեր» հնավայրում իրականացվող սխտեմատիկ պեղումների,
- «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախմբի կողմից «Ամբերդ» հնավայրում իրականացվող սխտեմատիկ պեղումների,
- «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախմբի կողմից «Չեսարի դարպաս» հնավայրում իրականացվող սխտեմատիկ պեղումների,
- «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախմբի կողմից «Բերդկունք ամրոց» հնավայրում իրականացվող սխտեմատիկ պեղումների,
- «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախմբի կողմից «Մըքքի ձոր» հնավայրում իրականացվող սխտեմատիկ պեղումների,
- ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից իրականացվող պեղումների,
- Քնակչության կողմից հանձնվող պատահական գտածոների,
- «Քանագեղի դամբարանադաշտ» հնավայրի պեղումներից հայնաբերված հնամարդաբանական նյութերը:

թ/ ՀՀ տարածքի հուշարձանների չափագրման, վերականգնման և բարեկարգման նախագծման աշխատանքների արդյունքները:

գ/ Քնակչության շրջանում փաստավակերագրական և կենցաղային առարկաների հավաքչական աշխատանքների արդյունքները:

2024 թ. նախատեսվում է նոր ցուցադրություն կազմակերպել Բերդ պատմամշակութային արգելոցի ցուցարանում, որի համար անհրաժեշտ է ձեռք բերել տեղի քնակչության մոտ ցուցակագրված կահույք, երկրագործական, անասնապահական, տնայինագործության, արհեստների, ինչպես նաև տոների և ծեսերի հետ կապված ազգագրական քնույթի առարկաներ:

Անհրաժեշտ է նաև ձեռք բերել տարբեր թանգարաններում և արխիվներում պահպող տարածաշրջանի կենցաղի և մշակույթի հետ կապված նյութերի կրնօրինակներ:

η/ Այս կամ այն կերպով հայկական հուշարձանները փաստող անհատ ուսումնասիրողների՝ պատմաբանների, հնագետների, ճարտարապետների, լուսանկարիչների և այլոց աշխատանքերը:

2024 թ. նախատեսվում է լուսանկարիչ Գուրոսի (Գուրգեն Պարոնյան-Հովսեփյան) հավաքածուի ամբողջացման նպատակով (այժմ համանուն հավաքածուն կազմում է 891 թանգարանային առարկա) ձեռք բերել նրա ժառանգների մոտ պահպող շուրջ 300 սեանկար:

2024 թ. Բջնի ամրոցի փաստավավերագրական նյութերի հավաքածուի ամբողջացման նպատակով նախատեսվում է ձեռք բերել պատմաբան, պատմական գիտությունների դրկուոր, պրոֆեսոր Իգիր Ղարիբյանին պատկանող և նրա ժառանգների մոտ պահպող Բջնի ամրոցի պեղումների շափագրությունները և լուսանկարները՝ 652 միավոր:

Հաստատված է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենին առընթեր գործող Գիտխորհրդի և Թանգարանային առարկաների, հավաքածուների գնման հանձնաժողովների կողմից

նախագահ Ա. Փիլիպոսյան  
քարտուղար Լ. Գևորգյան